ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

Աբովյան համայնքի 2026 թվականի կարիքների համար Աբովյան համայնքի գծանշման աշխատանքների ձեռքբերման նպատակով «ԱԲՀ-ԳՀԱՇՁԲ-26/33» ծածկագրով գնանշման հարցում գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Աբովյան

19/02/2026թ.
ժամը 10:30

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի՝
Նախագահ՝ Ա. Զոբանյան
Անդամներ՝ Ս. Չիտչյան, Լ. Շառաջյան, Ա. Առուշանյան, Կ. Փարսյան
Քարտուղար՝ Տ. Զոհրաբյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին
Ա. Զոբանյան

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.
Աբովյան համայնքի 2026 թվականի կարիքների համար Աբովյան համայնքի գծանշման աշխատանքների ձեռքբերման նպատակով «ԱԲՀ-ԳՀԱՇՁԲ-26/33» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2026թ. փետրվարի 18-ին ստացված պարզաբանումը և դրա վերաբերյալ տրամադրված պատասխան պարզաբանումը՝
Ի պատասխան ներկայացված պարզաբանման հարցման տրամադրվում է հետևյալ պարզաբանման պատասխանը.

Պարզաբանման հարցում	Պարզաբանման պատասխան
Հարգելի պատվիրատու ցանկանում ենք ավելի մանրամասն տեղեկատվություն ունենալ ջնջելու ենթակա մակերևույթների ծավալի վերաբերյալ, քանի որ այդ ծառայությունը խիստ կապ ունի գնագոյացման հետ: Արդյո՞ք ըստ տեխ բնութագրի 1000 քմ պետք է ապամոնտաժվի, եթե ոչ ինչ ծավալի մասին է խոսքը:	Ի պատասխան Ձեր հարցման՝ «ջնջելու ենթակա մակերևույթների 1000 մ^2 ծավալի» վերաբերյալ, պարզաբանում ենք, որ նշված 1000 մ^2-ը վերաբերում է **միայն հին պլաստիկ գծանշման հեռացման (քերելու) աշխատանքներին** և ներկայացնում է **միջինացված՝ առավելագույն (կողմնորոշիչ) ծավալ**՝ պլաստիկ գծանշմամբ տեղամասերի մեծ մասի համար, որտեղ նոր պլաստիկի կիրառման նպատակով նախապես պահանջվում է հին պլաստիկի հեռացում:
Հարգելի պատվիրատու, Հայաստանի Հանրապետությունում գծանշման աշխատանքները կարգավորվում են ՀՀ կառավարության ՝ 10 հունվարի 2008 թվականի N 113-Ն որոշումով, որտեղ չի նշվում գործունեության լիցենզավորման մասին: ՀՀ օրենքը քաղաքաշինության մասին՝ շինարարության իրականացում 1-ին կամ 2-րդ կարգ լիցենզիան տարածվում է տվյալ կարգավորումով սահմանված շինարարական գործունություն համարվող ծառայությունների վրա, որտեղ չի թվարկվում ճանապարհային գծանշումը: Խնդրում ենք ձեզ պարզաբանել լիցենզիայի պարտադիր պահանջը:	**Ի պատասխան Ձեր գրության՝ հայտնում ենք, որ ՀՀ կառավարության 10.01.2008թ. N 113-Ն որոշումը սահմանում է ճանապարհային գծանշման տեխնիկական պահանջներն ու կիրառման կանոնները և չի կարգավորում քաղաքաշինության ոլորտում գործունեության լիցենզավորման հարցերը:** Միաժամանակ, ՀՀ կառավարության 30.11.2023թ. N 2106-Ն որոշմամբ սահմանված քաղաքաշինության ոլորտում գործունեության լիցենզավորման կարգով լիցենզավորման ենթակա գործունեությունների թվում ներառված է «շինարարության իրականացում (ծածկագիր N 03)», իսկ օբյեկտների դասակարգմամբ ընդգրկված են նաև

	տրանսպորտային ուղիները՝ ավտոմոբիլային ճանապարհներ/փողոցներ: **Հաշվի առնելով, որ տվյալ գնման առարկայի շրջանակում նախատեսվում են ճանապարհածածկի վրա իրականացվող աշխատանքներ (այդ թվում՝ հին պլաստիկ գծանշման հեռացում/մակերևույթի պատրաստում և նոր պլաստիկ գծանշման կիրառում), պատվիրատուն՝ օրենսդրական պահանջներին համապատասխան և պայմանագրի պատշաճ կատարումն ապահովելու նպատակով, սահմանել է համապատասխան քաղաքաշինական լիցենզիայի ներկայացման պահանջ:** Ուստի մրցույթի փաստաթղթերով նախատեսված «լիցենզիա» պահանջը պահպանվում է և փոփոխման ենթակա չէ: Միաժամանակ, մրցակցության ապահովման նպատակով թույլատրվում է, որ լիցենզիան ներկայացվի կամ մասնակցի կողմից, կամ այն կազմակերպության (համատեղ գործունեության-կոնսորցիումի) կողմից, որը փաստացի կիրականացնի լիցենզավորման ենթակա աշխատանքների մասը՝ պայմանով, որ վերջինիս մասնակցությունը կներկայացվի համապատասխան պայմանագրով/համաձայնագրով:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

Հանձնաժողովի նախագահ		Ա. Զորանյան
Անդամներ		Ս. Զիլչյան
		Լ. Շառաջյան
		Ա. Առուշանյան
		Կ. Փարսյան
Քարտուղար		Տ. Զոհրաբյան